

ԲԵՐԵՆՈՆԵՅԱ ՄԵՆԱԿԱՆ

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՏԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ**

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ



իրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,
Տարեմուտի սեմին Մայր Աթոռ Սր Էջմիածնից աղոթքով և ուրորմած Աստծո շնորհների հայցով հայրական Մեր սերը և օրհնություններ ենթ թերում ձեզ ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռս:

Հույսով ու բարի ակնկալիքներով դիմավորում ենք 2017 թվականը՝ հրաժեշտ տալով մեր ժողովրդի համար հուզումներով դժվարին տարվան: Մեկ անգամ ես ապրեցինք պատերազմի, ռազմական սարքիչ գործողությունների տագնապները և կոլոտստների ցավը, նաեւ՝ ամավերջի այս օրերին: Ականատես եղանք և սիրամանրերին մեր զավակներին, որ անառիկ պահեցին մեր երկրի սահմանները: Զգացինք բաջալերությունը հայրենիքը պաշտպանելու պատրաստ մեր ժողովրդի միասնականության: Անցնող տարում հաղթահարեցինք նաեւ մերքին անկայունությանն ապառնալիքը՝ հաստատելով օրինականությանը խնդիրները վճռելու մեր ուղին:

Այս մարտահրավերներով ու հայրենական մեր կյանքի բոլոր դժվարություններով հանդերձ՝ մեր ժողովուրդն Աստծո օրհնությամբ աղարեց, բարիք տեսնեց, ի սփյուռս աշխարհի տունեց անկախ մեր պետականության 25-րդ տարեդարձը, գորավիզ կանգնեց ու սատարեց պատերազմական մեղրությունները կող սիրիահայությունը: Հայրենիքում և Սփյուռքում մեր ժողովուրդն ապրեց առ հայրենին սիրով, հույսով լավատես, որ նուրգայալ կյանքով, իր աշխատանքով, տաղանդով ու ձեռքբերումներով կերտելու է իր բարոյ, լուսավոր ներկան ու ապագան: Գոհություն ենք հայտնում Երկնավորին, որ մեր ժողովրդի զավակները կարեւորեցին իրենց հոգեւոր աճը, գորացրեցին իրենց կյանքում ու քրիստոնեական ճանաչողությունը, որին ուղղված է մեր Եկեղեցու ընդարձակվող գործունեությունը: Քրիստոնեական մեր հավատքի լույսի դրսևորումը այն ժայռեղեն հիմքն է, որի վրա շարունակ պիտի բարձրանա մեր կյանքը և ունենա մերուժը՝ հաղթանակներ կերտելու:

Տարեմուտը հրավեր է նորագոյության, վերափոխվելու, հրաժարվելու անցյալի սխալներից ու բացթողումներից: Մեր հորդորն է, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, որ քրիստոնեական սիրով, հայրենաշեն ջանքերով, մեր երկրում կայունության պահպանման և օրինականության ամրապնդման նախաձեռնողությամբ մասնակցություն բերենք մեր պետական ու հասարակական կյանքի գորացմանը և ի սփյուռս աշխարհի մեր ազգային և եկեղեցական անդատաանի շենացմանը: Շնտայենք միմյանց, ծառայենք մեր հայրենիքին, որի օրհնյալ կյանքը պիտի կերտենք, ծառայենք մեր ազգին, որ բազում հույսեր ունի իրագործելու: Օգնական լինենք նեղյալներին և կարոտյալներին: Միմյանց հանդես սերը, բարի նպատակն ու գործը Աստված անտես չի անում: Համեմատության այս ոգով դիմավորենք 2017 թվականը:

Համայն հայոց հոգեւոր նվիրական կենտրոն Սուրբ Էջմիածնից Մեր աղոթքն ենք բարձրացնում, որ Աստված օրհնի մեր հայրենիքը, օրհնի մեր ժողովրդի կյանքը ի սփյուռս աշխարհի, անվտանգ ու անհատը պահպանի մեր բանակի զինվորներին ու սպաներին, օրհնի՛ հիշատակը հայրենիքի համար գոհված Մեր բաջարի զավակների և ամուր ու անխաբար պահի խաղաղությունը մեր երկրի սահմաններին: Խաղաղություն ենք մաղթում ողջ աշխարհին, խաղաղություն՝ Մերձավոր Արեւելքին, Սիրիային, Իրաքին: Թող մեր Փրկչի առատ շնորհները, ուղարկություն, երջանկություն, բյուր բարիքներ հեղվեն ձեր կյանքից և ձեր ընտանիքներից ներս, սիրելիներ: Պահպանեք ձեր հավատքը, պահպանեք ձեր հայրենասիր, ազգամոլիք դպին, հոգ տարեք միմյանց, հոգացեք հավիտենական կյանքի համար, որ ունենք Հիսուս Քրիստոսով: Մաղթում ենք բարի, օրհնյալ տարի բոլորի: Շնորհավոր Նոր տարի:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՎԱՄԸ ՄԵՐ ՏԻՐՈՉ՝ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾԵՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱՄՇԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 6-ին մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ա. Ծննդյան և Աստվածայությունության տոնի առիթով Միածնաէջ Մայր տաճարում մատուցվեց հայրապետական ս. Պատարագ:

Պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը, ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը, ԱԺ պատգամավորներ և ՀՀ Կառավարության անդամներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Հայ Եկեղեցու բարերարներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, հասարակական գործիչներ, կրթական, գիտական և մշակութային հաստատությունների ներկայացուցիչներ:

Այս տարի հայրապետական ամսիովանին կրում էին Տավուշի մարզի Կոթի համայնքի ղեկավար Ֆելիքս Մեղիջյանը, Ներքին Կարմիրաղբյուր համայնքի ղեկավար Մանվել Կամենդարյանը, Բաղաևսիսի համայնքի ղեկավար Նարեկ Սահակյանը և Բերքաբեր համայնքի ղեկավար Արթուր Մադաթյանը:

Արարողությանը՝ որպես առնչություններ, սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Հովհան Եպս Գալոբյանն ու Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ Եպս Բաբայանը:

Ս. Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական պատգամն ուղղեց համայն հայությանը՝ ամենքին փոխանցելով «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» հրեշտակաբարբառ ավետիսը:

Արարողության ավարտին Մայր Աթոռի «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատանը տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերստին ներկաներին բերեց հայրապետական իր օրհնությունն ու բարեմաղթանքները:

Յանուս Հօր և Որդւոյ և Հոգւոյն Արթւ. ամէն:

«Եւ մի՛ կերպարանիք կերպարանաւ աշխարհիս այտորիկ. այլ խորագեցարո՛ք ի խորագութիւն մտաց ձերոց, առ ի քննել ձեզ զա՛մն և եթ զինչ ես կամքն Աստուծոյ, բարին ես հաճոյն ես կատարեալ»
(Հռոմ. ԺԲ 2):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,
Մեր Տիրոջ Սուրբ Ծննդյան բերկրանքով այսօր գոհաբանություն ենք բարձրացնում առ Աստված: Փառաբանում ենք Բերթեհեմում ծնված Հիսուս Մանկանը, Ով աշխարհ եկավ փրկելու կորստյան մատուկված մարդկությանը:

Աստծո կողմից արարված աշխարհում առաջին մարդը՝ Ադամը, աստվածային պատվիրանը խախտելով, ընթացավ Աստծո կամքին հակառակ, գրկվեց շնորհներից ու պարգևներից Արարչի: Ադամով մեղքը սկիզբ առավ մարդկային կյանքում, և մահը մուտք գործեց աշխարհ: Աստված, սակայն, Իր արարչական սիրով ու ողորմածությամբ նոր իրականություն կերտեց մարդկության համար: Ի լույս ժամանակի աշխարհ առաքեց Իր Միածին Որդուն՝



բավելու մարդկության մեղքը և պարգևելու հավիտենական կյանք: Քրիստոսով խորագվեց մեղքերով փոթորկվող աշխարհը, մարդկանց տրվեց նոր արարած լինելու շնորհը, աշխարհում խաղաղություն, սեր և հաճություն հաստատելու պատգամը:

Տիրոջ փրկագործության իրողության առջեւ Պողոս առաքյալը հորդորում է. «Այս աշխարհի կերպարանքով մի՛ կերպարանվեք, այլ խորագվեցե՛ք ձեր մտքի խորագությամբ, որպեսզի դուք ընկեք լավ, եւ թե՛ ի՛նչ է Աստծո կամքը՝ բարին եւ հաճելին եւ կատարյալը»:

Առաքյալի այս խոսքերն արտահայտում են ոգին Ավետարանի, որի բարոգությունն աշխարհում արգասավորեց Քրիստոսով խորագության ուղին՝ փոխակերպելով մարդկային կյանքը, փոխկերպելով հասարակություններ, արմատավորելով մտածողությունը համընդհանուր բարոյության եւ աշխարհում արդարության ու խաղաղության հաստատման: Ցավալիքին, սակայն, Աստծոն հակառակ մեղապարծ ընթացքները շարունակվում են:

Շարունակությունը՝ էջ 2



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ...

Սկզբը՝ էջ 1

Չեն դադարում պատերազմները, հակա-մարտություններն ու անաբեկությունները, ոտնահարվում են մարդկային իրավունքները, արդար դատապարտություն չեն գտնում ցեղասպանություններն ու մշակութային երեւ-նագործությունները: Ընթացողությունը, հարստանալու մարմնը մղում են խաբեու-թյան ու չարաշահումների, պատճառ դառնում մարդկային ողբերգությունների, առաջնորդում հասարակության բեռնաճան, սոցիալական անարդարության: Գոսարության են ազնվու-թյան կողքին ակնաստես ենք առնելության են նեղադարձության, խոնարհության են ծառա-յանվորումի հանդիման՝ փառապիտանք են

գալին բարիքի հաստատման մեջ տեսնելու սեփական առաքելությունը են միանություն մեջ կերտելու երջանկության, առաջնաքնի, ձեռքբերումների ուղիները: Այսպես կյանքը ինքնակառույց լինելուց դառնում է նվիրում, աշխատանքը՝ արարում, գոտությունը, տա-ղանքը՝ համընդհանուր բարիք, իշխանություն-ը՝ ծառայություն ժողովրդին, իսկ մարդու երկրավոր, անցողիկ կեցությունը՝ բաղձանք ու ձգտում դեպի հավիտենություն:

Լորդգույթյան ավետարանական պատ-գամը են առաքելական հորդորը մշտափու-ն են կենսունակ են մեր ժողովրդի համար: Ավե-տարանով և Լորդգույթ կյանքը դարձնում շարու-նակ մեր ազգին պարգեւ են հավատքի գո-

Փրկչի Տննության ու Աստվածայտությունյան խորհրդի առջեւ այսօր առաքելական նույն հորդորն ենք բերում, սիրելի՛ բարեպաշտ ժո-ղովուրդ, Աստծո կամքին հետեւելու, բարին ընտրելու, դեպի կատարյալ ընթանալու, տո-գորվելու կյանքը բարեփոխելու վճռականու-թյամբ ու նախանձախնդրությամբ: Պահպա-նենք մեր սրտերը որպես բեթլեհեմյան գողտ-րիկ անձավեր աստվածային ներկայության՝ լինելու Փրկչին ճշմարտապես երկրպագո-ւնք, ողորմած, արդարամիտ ու եղբայրասեր: Չորանակը Տիրոջ, որ կարող լինենք իրա-կանություն դարձնել մեր հույսերը, իրագոր-ծել ազգային մեր նպատակները: Մեր հոգի-ներում վառ պահենք հավատքը՝ որպես առ

դպին: Մեր ջերմ ողջույն ենք հղում են Սա-նուկ Հիսուսի փրկարար շնորհները հայցում ջուր Եկեղեցիների հոգեւոր Պետերին են նրանց հավատավոր հոտին:

Մեր ողջույն ենք հղում են Տիրոջ զորա-ցությունը մարդում Հայաստանի Հանրապե-տության Նախագահի տիրա Մերժ Սարգսյա-նին, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետու-թյան Նախագահի Տիրա Քալու Սահակյանին, Մեր օրինությունն ու բարեմարտանքներն ենք բերում Սուրբ Պատարագի արարողությանը ներկա Ազգային ժողովի Նախագահին, վար-չապետին, հայոց պետական ավագանուն են Հայաստանում հավատարմագրված դիվա-նագիտական առաքելությունների ներկայա-ցուցիչներին: Հայրության Մեր սերն ու օրինա-յունքը՝ հավատավոր համայն ենք զավակնե-րին ի Հայաստան, Արցախ են ի Սփյուռն:



իշխանաւնեցության մոլուցքների: Այս բոլոր վերքերի վրա Երիստոսի մարդեղության խոր-հուրդը պարզում է հույսը Լորդգույթյան, որ-պեսզի Պողոս առաքյալի խոսքի համաձայն՝ մարդիկ ընկնեն խաչը «Եւ թե ինչ է Աստուծո կամ-քը» բարին են հաճելին են կատարյալը: Եւ ապ-րեն աստվածաճան իրագործումներով:

Աստվածային կամքին համաձայն ըն-թացքն է կանգուն պահում աշխարհը են կյա-նքը գարդարում սիրով, խաղաղությամբ, ար-դարությամբ, ճշմարտությամբ, որոնք Աստ-ված շարունակ անցնում է հավատավոր հո-գիներում: Երիստոսով Լորդգույթյան վկայու-թյունն է, որ մենք՝ իբրեւ քրիստոնյաներ, պի-տի բերենք աշխարհում: Երիստոսյայի կյա-նքը ներգործուն առաքելություն է մարդկանց են աշխարհի հանդեպ: Երիստոսի փրկագոր-ծությունը օրինակ է համամարդկային են ազ-

րություն, հոգու ամրություն ու արիություն՝ դիմակայելու փորձությունների, համբերելու նեղությունների են արարելու գոր իշխանակա-րածանի գործեր: Նույն ոգով այսօր դիմազ-րավում ենք հայրենի մեր երկրի անօրինա-կան շրջափակմանը, կյանքեր խլող սատրի-նազմական գործողությունների, հաղթահա-րում մեր առջեւ ծառացած դժվարություննե-րը, դիմակայում մարտահրավերներին են քանքեր բերում՝ կերտելու խաղաղ ու բարոյ կյանքը մեր ժողովրդի, սատար կանգնելու Մերձավոր Արեւելքում պատերազմական դժ-վարությունները կրող մեր ջուրերին ու եղ-բայրներին: Ներկա հիմնախնդիրների, նեղու-թյունների հանդիման Երիստոսի Տննության են Աստվածայտությունյան տնը կյանքի նոր ա-րշալույս է բացում, շերտացնում մեր հոգիները են հավելում հույս ու լավատեսություն:



Տերն առաջնորդող բեթլեհեմյան աստղալույս են իմաստուն մոգերի պես մեր կյանքի ճանա-պարհը միշտ դարձնենք հավատարմություն ու նվիրում առ Տերը մեր Հիսուս Երիստոս, հավատարմություն ու նվիրում առ Հայրենին են Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Երիստոսի Սուրբ Տննության բերկրալի ա-վետիսով եղբայրական ողջույն ենք հղում են Մեր բարեմարտանքները բերում Առաքելա-կան մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Ա-րամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապա-տիվ Տ. Նուրիան արքեպիսկոպոս Սանուկյա-նին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սուրբաֆյանին են մեր Եկեղեցու ողջ հոգեւոր

Սուրբ Տննության տոնի այս նվիրական օրը աղոթք ենք բարձրացնում առ մարդացյալ Աստվածորդին ողջ աշխարհի խաղաղու-թյան, աշխատասիրտ մեր ժողովրդի բարո-րության ու առաջնաքնի համար: Հայցում ենք, որ Բարին Աստված մարդկանց արտերից հեռացնի բռնության են սատելության որոմնե-րը են սերմանի սիրո են համբաշխության շնորհները՝ իրագործելու Աստծո կամքը՝ «բարին են հաճելին են կատարյալը»: Թող Տերը Իր օրինության են Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո պահպանի մեր երկիրը, պա-ծառ պահի մեր Սուրբ Եկեղեցին են հավատքի ու հավատք գործող չափիներում առաջնոր-դի մեր կյանքը՝ փառաբանելու Իր Սուրբ Ա-նունը այսօր են միշտ են հավիտյան: ամեն:

«Երիստոս ծնաւ են յայտնեցաւ, ձեզ են մեզ մեծ անտիս»:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մասնակցեց ճակատկերի սր Պատարագ



Հունվարի 5-ին, մեր Տեր են Փրկչի Հիսուս Երիստոսի իրեշտակաբար-բառ Ս. Տննության բերկրառատ տոնի Նախապատկերի առիթով, հանդիսա-պետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարե-գին Բ Շարագույն Պատրիարք են Ա-մենայն Հայոց Կաթողիկոսի, Միաձ-նակ Մայր տաճարում մասնակցեց ճրագալույցի ս. Պատարագ:

Պատարագից են Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակու-թյան կենտրոնի տնօրեն Վարդան Եպս Նավասարդյանը:

Ս. Պատարագի ընթացքում Վար-դան Եպսոսն իր բարոգում անդ-րադարձ կատարեց Տիրոջ Ս. Տնն-ության խորհրդին:

«Ինչդ՛ր ենք մենք տասնամյակներ անց՝ ճրագալույցի այս երեկո, դար-

ձյալ եկեղեցական տոնակարգի հա-մաձայն, եկել Աստծուն ընդառաջ: Որպեսզի մեր ընտանիքներ տանենք եկեղեցու խորաններից վառված մի տաք են ջերմ ճրագը, որ, իբրեւ Տի-րոջ Նույնի խորհրդանշիչ, պիտի գա մեր կյանքը, մեր հոգին տաքացնելու են ջերմացնելու, պիտի գա հաշտեց-նելու մեզ ինքներս մեզ հետ, հաճու-թյուն հաստատելու մեր համամարդ-կային միջավայրի մեջ, պիտի գա իր փառքի հաստատությանը, որպեսզի հոգեւոր խաղաղություն հաստատի մարդկանց կյանքում:

Ս. Տննության դրվագում ավետարա-նիչները մեզ փոխանցում են, որ Հի-սուս ծնողները՝ Մարիամ են Նովեմ-բը, իշխանատեղի չգտնելով, քա-րայրի մեջ պատսպարվեցին, ու այդ

շրջանում երկնքից ճառագայթող մի աստղ, որ ամենափայլունն ու ամե-նագործուն էր՝ իբրեւ Աստծո հայտ-նության նշան, առաջնորդեց կայա-ցած, կյուրապես հարստացած, իշ-խանության մեջ ամրացած են սա-կան գիտության փնտրողի մեջ գտնվող երեք մոգերին, ովքեր քայլե-ցին, անցան իրենց կյանքի ճամփան են եկան ընդառաջ այդ Նույնին են գտան Հիսուսին են իրենց կյանքից, ի-րենց ձեռքբերումներից ընծայաբերե-ցին երկնքի են երկրի Արարչի Աստ-ծուն, Ով եկել էր մարդկային մեղքը վերացնելու, Ով եկել էր մարդուն միախառնություն բերելու, աղքատնե-րին ու կարողության երկրի արդարու-թյուն հաստատելու են արդարու-թյամբ դառնելու, Ով եկել էր Աստծոց հեռացած մեղավորներին են կյուրե-

մեջ ճանճացած իշխանավորների ո-ղորմություն են գթությունց դատե-լու, Ով եկել էր՝ իբրեւ սիրո հայտնու-թյուն, սիրո խորհրդի կանչելու են ա-ցելու՝ «Եկե՛ք Ինձ մոտ բոլոր հոգնած-ներ ու ծանրաբեռնվածներ, են Ես ձեզ հանգիստ պիտի պարգեւեն»:

Այսօր, երբ մենք գտնվում ենք Ս. Տննության մեծագույն համաժողովու-րդական տոնակատարության նա-խապատկերի, այս Նախաձայնի խորհրդի մեջ, առաջին հերթին մեր աղոթքների մեջ պիտի խորհրդա-ծենք Տիրոջ ծննդյան սիրո խորհրդի մասին, պիտի մտածենք՝ արդյոք մենք՝ իբրեւ Աստծո հոգեւոր զավակ-ներ, ինչպե՛ս ենք արժենորում Ս. Տննության խորհուրդը մեր կյանքում:

Եթե մենք գիտենք, որ Աստված այնքան սիրեց մարդուն, այնքան սի-

րեց Իր արարչագործությունը, որ փնչել իսկ Իր Միաձին Որդու մեջ այդ սերը հայտնեց՝ իբրեւ փրկություն մարդու, իբրեւ կանչ հավիտենական կյանքում բնակության համար, ու-րեմս՝ մենք էլ, սիրելիներ, այդ սիրո ճանաչողության ճանապարհը պիտի փնտրենք, որովհետեւ եթե մեր գոր-ծերը խախտ են, մենք չենք ու-զում, որ այդ գործերը հայտնի լինեն, մենք ճշմարիտ քրիստոնյա չենք, իսկ եթե ճանաչում ենք Աստծո Նույնը, են եթե այդ Նույնը մեր կյանքում այդպի-սի ճանաչողությամբ փառավորվում է, ուրեմս՝ սիրո գործերով Աստված հանապազ ծնվում է մեր կյանքը, մեր հոգու, մեր սրտի մտորի մեջ:

Պատարագից արթազանք հորդո-րեց հավատացյալներին Աստծուն խնդրել, որ Իր իմաստության Նույնը ծագեցնի իրենց մտքի, հոգու են կյանքի մեջ, որպեսզի նրանց սիրտը դառնա այն իրական մտոր, որտեղ կարող է Լույսը ծագել, կարող է Տերը հայտնվել են փառավորվել ամենքի կայնքում են հավատքի գործերի մեջ: Հավատք Պատարագի՝ Ամենայն Հայոց Հայրապետը բարձրացավ Ա-վագ Խորան են վառեց կենսատու մոմը, որից Հիսուս Երիստոսին խոր-հրդանշող լույսը բաշխվեց հավա-տացյալներին:

Պատարագի արարողությունից հետո հոգեւորականների թափողը Մայր տաճարից առաջնորդվեց դե-պի Հին Վեհարան, որ Նախագահու-թյամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ կատարվեց տարվա առաջին տնօրինեց:



Հունվարի 11-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսն ընդունեց Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի համայնքների գոհված գինձառայողների ընտանիքներին՝ ուղեկցությամբ Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստայանի:

Ամենայն Յայոց Կաթողիկոսն ընդունեց Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի գոհված գինձառայողների ընտանիքներին



Հանդիպմանը ներկա էին Բերդի տարածաշրջանի հոգեւոր հովիվներ Արամ քհն. Միրզոյանը եւ Աբել քհն. Զարուհյանը, Բերդի տարածաշրջանում մարզպետի ներկայացուցիչ Դավիթ Մխիթարյանը եւ գինվորական կոմիսար, փոխգնդապետ Գագիկ Խաչատրյանը, երկուսն ալ իրենց հովանավորությունն ստանձնած մոսկվաբնակ Կարո Առաքելյանը եւ կազմակերպչական աշխատանքներում իր ներդրումն ունեցած Ալիկ Ավագյանը:

Բագրատ սրբազանը, տավուշցիների առկայությանը շնորհակալություն հայտնելով, խորհուրդներով Ամենայն Յայոց Կաթողիկոսին՝ Ամանորի եւ Սուրբ Շնորհալուստների առիթով, Նորին Սրբությանը մաղթեց քաջառողջություն, երկար տարիների կյանք ու բեղուն գործունեություն: Տավուշի թեմի առաջնորդը նաեւ իր խորին երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Յայրապետին՝

Տավուշի սահմանապահ ժողովրդի հանդեպ ցուցաբերվող հատուկ ուշադրության համար: Այնուհետեւ թվով 19 մայրերին եւ 39 երեխաներին ու պատանիներին հայրական իր օրհնությունը բերեց Ամենայն Յայոց Կաթողիկոսը՝ փոխանցելով ամենքին Տեր Հիսուս Զրիստոսի Ս. Շնորհալուստ կենդանարար ավետիսը:

Նորին Սրբությունը վստահությամբ ընդգծեց, որ այս այցելությունն իր անջնջելի դրոշմն է թողնելու Մայր Աթոռ ժամանած պատանի տավուշցիների հոգում, իրենց հոգեւոր հովիվների գործունեության շնորհիվ նրանց հաղորդ եւ դառնալու Ս. Էջմիածնի խորհրդի մեջ ամփոփված արժեքներին, որոնցով ոգեշնչվել են իրենց հայրերը եւ այսօրվա իրենց հոգեւորական հայրերը: Նորին Սրբությունը հայտնեց Վեհափառ Յայրապետին՝

Մանուկներին եւ պատանիներին Յայոց Յայրապետը պատգամեց իրագործող լինել այն ինձերի եւ փափագների, որ իրենց ծննդյան առաջին իսկ օրվանից ունեցել են իրենց մայրերը եւ հայրերին խաղաղության համար իրենց կյանքն ընծայած հայրերը՝ Նշելով, որ վերջիններիս քաջարի ոգին կյանքի ողջ ընթացքում պիտի ուղեկցի լինի նրանց զավակներին: «Քաջերի որդիները քաջեր են»

Իր բարի հայացքի ներքո պահի Յայաստան աշխարհը եւ մեր ժողովրդի աստվածասեր զավակներին:

Վերջում երիտասարդներն անակնկալ մատուցեցին Վեհափառ Յայրապետին՝ Յայոց Հորն ընծայելով իրենց ձեռագործ աշխատանքը, ինչպես նաեւ աստվածներով եւ կատարելով ժողովրդական երգեր: Իր հերթին Ամենայն Յայոց Կաթողիկոսը փոքրիկներին



ասում է մեր ժողովուրդը: Դուք այդ քաջագուն ոգին եք կրում ձեր մեջ՝ ապրելով սահմաններձ գյուղերում եւ ձեր կյանքով ամուր ու անառիկ պահելով մեր սահմանները, հաստատուն եւ անսասան՝ մեր երկրի խաղաղությունը»,- ասաց Նորին Սրբությունը՝ մաղթելով, որ մշտապես ապրեն Աստծո օրհնության եւ պահպանության ներքո:

Իր գնահատանքը հայտնելով թեմակալ առաջնորդին, թեմի հոգեւոր սպասավորներին եւ այցի կազմակերպիչներին՝ Ամենայն Յայոց Յայրապետը հայցեց, որ երկնավոր Տերն

նվերներ բաշխեց: Մայր Աթոռ Սբ Էջմիածինն ամանակը նրանց համար կկատարելապես նաեւ ուխտագնացություն:

Հանդիպման մասնակիցները շրջայց կատարեցին մայրավանդուն, աղոթեցին Մայր տաճարում, երան Մայր Աթոռի թանգարաններում եւ տարբեր կառույցներում:

Հանդիպման մասնակիցները շրջայց կատարեցին մայրավանդուն, աղոթեցին Մայր տաճարում, երան Մայր Աթոռի թանգարաններում եւ տարբեր կառույցներում:

Ամանորի գիշերը կատարվեցին գոհաբանական մաղթանք եւ նուսորինք



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսի օրհնությամբ՝ Ամանորի գիշերը՝ ժամը 24.00-ին, Մայր Աթոռ Սբ Էջմիածնում եւ Յայ Եկեղեցու բոլոր տաճարներում կատարվեցին գոհաբանական մաղթանք եւ նուսորինք:

Նուսորինքի համար նախատեսված

Նուսն այս տարի Մայր տաճարին ընծայել էին ԼՂՀ իշխանությունները: Հայկական ավանդության մեջ Նուսը՝ իբրեւ ազգային խորհրդանշ, կրում է կյանքի, ծաղկունքի եւ առատության իմաստը:

Ջրիստոնեական խորհրդաբանության մեջ Նուսը խորհրդապատկերն է Հիսուս Զրիստոսի հեղած արյան՝ խորհրդանշելով նաեւ Տիրոջ հրաշափառ Հաղթանակը ու Աստծո շնորհների բազմազանությունը: Յայոց Եկեղեցու վարդապետների եւ հայրերի մեկնություններում Նուսը ներկայացվում է նաեւ այն խորհրդաբանությամբ, որ Նուսն հատկանշի պես Եկեղեցու ան-

դամները շատ ու բազմատեսակ են, սակայն պատված են Նուսն նման պինդ կեղեցով՝ միավորված լինելով մեկ Եկեղեցու մեջ: Այս պատճառով Նուսն խորհրդաբանությունը լայնորեն օգտագործվել է հայկական եկեղեցական ճարտարապետության, արվեստի եւ մանրանկարչության մեջ:

Ամենայն Յայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Իրանի նախագահ Հասան Ռոհանիին

Հունվարի 9-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսը Գերագույն հոգեւոր խորհրդի, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբանության եւ հայ ժողովրդի անունից ցավակցական նամակ է հղել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Հասան Ռոհանիին՝ ԻԻՀ նախկին նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆաանջանի անակնկալ մահվան կապակցությամբ:

Նորին Սրբությունն իր վստահությունն է հայտնել Իրանի նախագահին, Իրանի ժողովրդին եւ Ռաֆաանջանի ընտանիքի անդամներին՝ բարօրություն եւ խաղաղություն մաղթելով հարեան Իրանի ժողովրդին՝ իր գորակցությունը բերելով սգո այս ծանր օրերին:

2ավեն վրդ. 3ագիչյանն արժանացավ հայրապետական օրհնության



Դեկտեմբերի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում ընդունեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբան, Մյանմարի, Սինգապուրի եւ Դաքայի հոգեւոր հովիվ, Շայրագույն Արեւելքում Նորին Սրբության ներկայացուցիչ 2ավեն վրդ. Յագիչյանին, ով ձեռնարկ Մայր Աթոռի լուսարարապետ Հովհանն եպս Հակոբյանի՝ դեկտեմբերի 28-ին Օշակակեր Ս. Մեսրոպ Մաշտոց Եկեղեցում տված կյանքի հատուկ արարողությամբ արժանացել էր մասնավոր վարդապետական աստիճանին:

Նախորդ օրը տեղի էր ունեցել հայր 2ավենի՝ «Հոգեբանական գիտելիքների կարեւորությունը հոգեւոր հովիվի ծառայության մեջ» թեմայով վարդապետական թեզի բանավոր պաշտպանությունը:

Գարեգին Բ Վեհափառ Յայրապետը, շնորհավորելով վարդապետական աստիճան ստացած հայր 2ավենին, ասաց. «Ուրախ եւ մեր հոգին այս գերեզնի իրադարձության առիթով, քանի որ Յայրապետայն Առաքելական Ս. Եկեղեցու արեւելքից եւս մեկն արժանանում է բարձր ու պատասխանատու պատվի եւ շնորհի: Վար-

դապետական թեզի պաշտպանությունը ճշմարիտ վկայություն է, որ տվյալ եկեղեցական ունի բարձր մտավոր կարողություններ եւ իր հովվական առաքելությանը զուգահեռ եկեղեցական ծառայության մեջ մշտապես պիտի նաեւ մտքով, զրոյով արգասավորի հավատացնող կյանքը, իր գրվածքներով նպաստի հայ ժողովրդի հոգեւոր կրթության ու հոգեւոր դաստիարակության պատասխանատու գործին»:

Իր հայրապետական գնահատանքն ու պատասխանատվության կրողն է եւ իր կյանքի ամբողջ ընթացքում պիտի քաջ գիտակցությամբ ու առավել մեծ ծառայանվիրումով շարունակի սպասավորել Յայ Եկեղեցուն: Վերջում Վեհափառ Յայրապետը վարդապետական արժանանդատ լանջախաչով զարդարեց 2ավեն վարդապետի կուրծքը եւ Պահպանիչ աղոթքով օրհնեց նրան:

Լրատվական կույրերը՝ ՍՍՏԲ ԱԹՈՐԻ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏԵՐԵԿԱՅԱՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՇԻՐԱՅՈՒՆ ԲՎՈՅՎԱՆԵՐԻ ՎՇԽԱՐԸ


Սկիզբը՝ թիվ 14-24

Արդարության հաղթանակի հա-
վատը բանաստեղծի անասան
պահեց մինչև վերջ, թեեւ գիտեր,
որ հայրությունը միայնակ չի հաս-
նելու իր ազգային երազանքներին
ու նպատակներին: «Բանաստեղ-
ծի բողոքը» բերվածում նա ամե-
նուր հնչող ժողովուրդների բարե-
կամության ու եղբայրության քա-
րոզությունն ուզում էր գործա-
կանի վերածել. հույս ուներ, որ մի
օր խոսքը գործի կվերածվի, գե-
րտնությունները խղճով ու արդա-
րամտությամբ կվերաբերվեն հայ-
թուրքական թնդկոխ ու կպար-
տադրեն եղեռնագործին վերա-
դարձնել մեզկից իր խլածը:

*Եղբայրության գործն է վստահ՝
Մասին հանել բանտից,
Թեկուզ ինչ-որ ցեղ մի նսեմ
յարադանի խառնից...*

Սակայն Հայոց մեծ եղեռնից
անցել էր կես դար, անկասելի ժա-
մանակն անցնում էր մոռացու-
թյան ուղիներով, աշխարհի չորս
կողմերն էր հատկապես «սառցա-
լուռ Հյուսիս» ու «քարե Արե-
մուտքը», որոնցից մեծ սպասելիք-
ներ ունեին հայությունն ու նրա
բանաստեղծը, «անշշուկ հաղ-
թում» էին նույնիսկ «Յառաջա-
կատուն» եւ խափանում ակնկալ-
վող «ահեղ դատաստանը»:

Արեմուտքի եւ Արեւելքի հա-
կասությունները խորությամբ էր
ընկալել ու մեկնաբանել դեռես
Հովհ. Թումանյանը. կարծում էր,
որ Արեմուտքն իր «մեքենայի եւ
նսուկ ստրուկներով» մարդկային
քաղաքակրթության գարգացու-
մը հանգեցրեց դասակարգային
այայթերի գիտակցության, եւ Ա-
րեւելքն էր, որ իր եղծմանով եւ
«հեքիաթային պալատներով»
բանաստեղծը «հոգու հայրենիք»
էր համարում, ենթակա է նրա
քննադատ վերաբերմունքին, «մե-
քենայի եւ նսուկ ստրուկներին»
նախնորներին ու արյունալի ա-
ղետներին: Այն հակադրությունը,
որով բանաստեղծը պատկերել է



արյունալի Արեմուտքի «հոգու
անապատի» եւ իր հոգու հայրե-
նիք «աստվածային Արեւելքի»
էությունը, աղետ է ողջ քաղաքա-
կիրթ մարդկության համար:

*Արյունային աղետներով,
աղմուկներով ահարկու
Արեմուտքի ըստրուկները
մեքենայի եւ նսուկ՝
Իրենց հոգու անապատից
խուսափում են խոռոչներում՝
Հեպ Արեւելքն աստվածային -
հայրենիքը իմ հոգու:
Թումանյան Հ., Երկերի ժողովա-
ծու չորս հատորով, «Հայաստան»
իրատ., հ. 2, Եր., 1969, էջ 270*

1921 թ. մայիսի 1-ին Հովհ. Թու-
մանյանի գրած այս քառյակից
հետո հին ոճիկները մոռացու-
թյան տված Արեմուտքը տա-
նալականներ շարունակ նորանոր
աղետներ բերեց մարդկությանը
եւ իր իսկ պատճառած վշտերի ու
տառապանքների հանդեպ «վիր-
լության» էլի մնաց անտար-
բեր: Թումանյանական լավատե-
սությունն անգամ երազանքի եւ
իրականության սուր հակասու-
թյուններից կարող էր սասանվել
Շիրազի ժամանակներում: Հայոց
հին վերքերը դեռ չամռված ու
չսպիացած՝ գերտերությունների
աշխարհաքաղաքական նորա-
նոր բախումները բերում էին նու-

րանոր հուսախաբություններ,
եղեռնագրվել ու հայրենագրված
ժողովրդի բանաստեղծը ողջ խո-
րությունը էր զգում մենակության
դատապարտված ու անիրավ-
ված ազգի վիշտ ու տառապան-
քը, դառնանում ու անգոր զայ-
րույթով էր դիմում իր ոճրագոր-
ծության պտուղները վայելող
անտարբեր աշխարհին:

*Վշտի ոչ մի կնճիռ չկա
Արեմուտքի ճակատին,-
Ինչո՞ւ ամպեմ, որ կարծակեմ
սուլթանների ճակատին,
Կես դար անցավ, բայց մահիկը
դեռ չի հանվել կախաղան,
Մասիս, գեթ մի քար տուր՝
խիտմ Արեմուտքի ճակատին:*
330

Անցել է եւս կես դար, բայց գրե-
թե նույն իրավիճակն է, եթե կա
տարբերություն, դա ազգերի-
թուրքերի կողմից ան պար-
տադրված պատերազմում մեր
հաղթանակն է եւ Արցախի ազա-
տագրումը՝ հայ քաջամարտիկ-
ների խիզախության ու բազմա-
թիվ զոհերի գնով, եւ աշխարհի
ավելի քան երկու տասնյակ պե-
տությունների դատաբարոտող
խոսքը: Սակայն հայերի ցեղա-
պանության թուրքական անա-
մոթ հեղուկ-ուրացումները դե-
ռես սատարվում են նույն Արե-

մուտքի եւ Թուրքիայի հետ կրո-
նական, քաղաքական, կուլ-
թատնտեսական ու այլ շահերով
կապված գերտերությունների
կողմից: Դրանցով քաջալերված
Թուրքիայի ներկայիս ղեկավա-
րությունը ոչ միայն չի առերե-
վում իր արյունոտ անցյալի հետ,
այլեւ ավելի մոլեգնում է իր հա-
կախյալ հիստերիկ հեռտարաբա-
նությամբ, շարունակում Հայաս-
տանի եւ Արցախի շրջափակու-
մը, պարբերաբար ու նեղգորեն
խախտում է պայմանավորված
հրադադարը, հատուցման մեր
արդար պահանջի դիմաց ներկա-
յացնում ստորաբար ու ցնկի
քաղաքական պահանջներ:

Միևնույն ժամանակում հայոց
կրոնատերերի ող-
բերգության ահազանությունը,
թափած ծովածավալ արյան ու
արցունքի ահռելի ծավալները
շահախնդրորեն չտեսնելու տվող
միտումնավոր կույրերին ու ա-
նարդար աշխարհիկ կամեմուն-
դ էր սթափեցնել ու զգաստացնել
պատկերավոր համեմատու-
թյամբ եւ իր մեծ նախորդի՝ Դ.
Շարուժանի նման նորագույն
ժամանակներից ու դարերից
պահանջում էր արդարության ու
վրիժառության աստվածուհու՝
Նեմեզիսի հայտնությունը:

*Մեր արցունքը թե դոխիցի
հնոց ընկներ՝ կմարեր,
Մինչ Վանա ծով՝ արցունք
դառած՝ ձեր աչքն է դեռ, ո՞վ
սարեր,
Վախենում եմ՝ մեզ հավիտյան
դու պարտք մնաս,
ո՞վ աշխարհ,
Մի՞թե էլ չի աշխարհ գալու մեծ
Նեմեզիս, ո՞վ դարեր:*
323

Այնուամենայնիվ, իր ժողովու-
րդին «մեծ գործերի» նախապա-
րատած հայ բանաստեղծը
պատմական արդարության վե-
րականգնման, թեկուզ էր աղոտ,
մի թաքուն հույս էր վախճալում
եւ կառնում դրան: դա քաղաքագե-

տին ներելի չէ, բայց հոգեբանու-
րեն ու մարդկայնորեն հասկանա-
լի է բանաստեղծի համար: Հուսա-
հատության պահեր նա իրոք ու-
նեցել է հատկապես Վ. Պողոսյան
եւ խորհրդային բարձրաստիճան
այլ ղեկավարների՝ Թուրքիա ա-
յնությունների եւ Աթաթուրքի գե-
րեզմանների ծաղկեպսակ դնելու
դեպքերում: Անգամ այդ պարա-
զայում նա իրեն իրավունք չէր վե-
րապահի հուսախաբ անելու իրեն
հավատացող աշխարհացիքի հա-
յությանը, որ նույն այդ հավատով
պայքարի ելավ Արցախի ազա-
տագրության համար: Բանասա-
տեղծը, սակայն, համաժողովու-
րական այդ ազնիվ բռնկումն ու
նրա հաղթական ավարտը թեեւ
չտեսավ, բայց ճշգրտ էր հեռու
վանել անխուսափելի մահը, ո-
րովուհետեւ ներքին մի համոզումով
հավատում էր իր քնարի «մեծ իդ-
ծերի» կատարմանը:

*Քաշվիր, ո՞վ մահ, մեծ
իրծեր են իմ քնարին սպասում,
Հեռ դարձառենից հայն է ինձ
հետ Մասիս սարին սպասում,
Հեռ հայ բախտի վայ են
հայոց պաղնիստները
բյուրակոր,
Դուստ բաց թող... մեծ գործեր
են մեր աշխարհին սպասում:*
327

Արցախի ազատագրումով բա-
նաստեղծի մարգարեությունը
մասամբ իրականացավ, բայց
նրա մարդկային ու ազգային ե-
րազանքներն ամբողջական էին,
եւ հայ մալուկ պատգամախոսու-
թյունն ու ներդրումն մեծ հայտն-
ված հայության օգտակար լինե-
լու ձգտումը՝ մշտնջենական:

*Լոկ մի բանի համար կուզեմ
անսահունքուն ունեւնալ,
Այս աշխարհում դարը մի օր
կենդանություն ունեւալ,
Որ զամ խորից քեզ օգնութիւն,
ազգ իմ, երբ որ ներն ընկեսն,
Միա ինչու չէի ուզի հավիտյան
բուն ունեւալ:*
325

*Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր*



Սկրիշ Սկրյան

Սկիզբը՝ էջ 4

Ուստի միանգամայն անհիմն է Մկրյա-
նի պնդումը «Վարդավառի», «Տնտյան»
տարերի կապակցությամբ, թե այս բա-
նաստեղծությունների մեջ «կրոնական
զգացմունքի որեւէ հետք չկա» (էջ 148):
Ըստ Մկրյանի՝ «Նրա ստեղծած գրա-
կան պատկերները հաճախ հիշեցնում են
վերածնության մեծ վարդերների նկար-
ները: Իրոք, եթե Նարեկացին նկարիչ լի-
ներ եւ նկարեր այնպես, ինչպես նկա-
րագրում է, կստացվեր, անշուշտ, Ռաֆա-

ՀԱՅԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

(Ժամանակը եւ առանձնահատկությունները)

յելի վրձնին արժանի մի գործ: Նա այն-
քան մանրամասն ու համարձակ է կանա-
ցի գեղեցկության իր նկարգրությամբ,
որ հիշեցնում է կրոնական երկրորդածու-
թյունից հիմնականում գերծ հետագա
դարերի բանաստեղծներ Նահապետ Զու-
լակին եւ Նաղաշ Հովնաթանին» (էջ 151):
Այստեղ եւս Մկրյանին պետք է առաք-
կեց: Նախ բանաստեղծական բառա-
նկարը հայ պոեզիայի բնորոշ հատկա-
նիշն է, Նարեկացու բառանկարները
զուտ Նարեկացիական են եւ շատ տպա-
վորիչ, դրանց համեմատության եզրը Թու-
րոս Ռուլինի ու Սարգիս Պիժակի ման-
րանկարներն են, այնպես որ՝ Ռաֆայելին
հիշելու անհրաժեշտություն չկար, Ռա-
ֆայելը թող մնա իր երկրում: Իսկ հակա-
ռակ Զուլակին եւ Հովնաթանին, որոնցից
հատկապես վերջինը շատ հաճախ անց-
նում է կնոջ պատկերման պարկեշտու-
թյան սահմանը, Նարեկացին, շատ գու-
նեղ ու պատկերավոր լինելով, որ բա-
ցարձակ հանձնարի արգասիք է, նաեւ չա-
փազանց զուսպ է, քանզի նրա հիաց-
մունքի առարկան ոչ թե երկրային կինն է,
այլ Տիրամայրը: Ուստի նա ոչ թե նրա աչ-
քերի մեջ է նայում, այլ հայացք է ուղղում
կերպարին, հագուկապին, շարժումներին:
Իսկ սրանք տարբեր բանկածներ են:

Բանը հասնում է կասկածանքի Զրիստո-
սի կերպարի կապակցությամբ, քանի որ
«Եկեղեցական վարդապետությունը չէ,
որ կազմում է Նարեկացու տաղերի բո-
լակեղանությունը <...>: Այժմ դժվար է
հասկանալ, թե ինչ կապ ունի այդ տաղը,
իբրեւ այլաբանություն, Զրիստոսի հա-
րության հետ...» (էջ 153-154): Այսպես
Մկրյանը Նարեկացուն ուղղում է Նարե-
կացու դեմ՝ խորհրդային գաղափարա-
խոսության պահանջներով փորձելով
փրկել նրան եկեղեցապալական հեղինակ
լինելուց: Մկրյանը շատ ուռճացրել է
նաեւ բանահյուսության հետ կապը, եւ
դա այն դեպքում, երբ բանահյուսության
էին վերածվել նաեւ աստվածաշնչյան
պատմությունը, այսինքն՝ Աստվածաշնչի
ժողովրդականացված քարոզչությունը
վերափոխված ձևով արդեն վերադառ-
նում էր որպես բանահյուսություն:

Ըստ Մկրյանի՝ նույն վերածնության շն-
չով «Մատյան...»-ի մեջ «Հանձինս իրեն
հանձնում է զայիս մարդը իր հոգու ամե-
նամարդկային, ամենախորունկ ու ամե-
նանուրբ ծայքերով...» (էջ 172, միջնա-
կյալ շտկենք՝ ոչ թե «հանձինս իրեն», այլ
հանձինս իրեն): Այո՛, մարդը՝ «հանձինս ի-
րեն»՝ Նարեկացու, այսինքն՝ սրբալիրո
հոգեւորականի եւ ոչ թե հանձին քաղա-

քացիական անձի: Իսկ ո՞վ սասց, որ հո-
գեւորին բնորոշ չեն այն խորունկ մարդ-
կային ապրումները, որոնք ամբողջ պոե-
մի էությունն են, եւ որոնք թվարկում է
զրապանագետը: Նարեկացու Մարդը՝ ի-
րենով մարմնավորված քնարական հերոս-
ը, նույն հավաքական տուրքն է, ով ի խո-
րոք արտի Աստծուն խոսք էր ուղղող ինչ-
պես Աստվածաշնչի սաղմոսներում, այն-
պես եւ 5-րդ դարի հայ իրագրեր բանաս-
տեղծների պաշտպանների եղբայրն,
ապպե՛՛ Նարեկացուն նախորդած շատ
բանաստեղծների եւ հատկապես Սուե-
փանոս Սյունեցու բազմաթիվ երգե-
րում: Հաջորդող էջերում. «... հանձինս
[հանձին] նրա լիրիկական հերոսի ամե-
նացայտուն ու ամենախոր պատկերումն
է գտել իրական մարդը, իր ներքին բարդ
ապրումներով: Միևնույն շարականների
բանաստեղծները ներկայացնում էին ճե-
րագանցապես Աստծուն եւ Զրիստոսին
Նարեկացին ներկայացնում է գերազան-
ցապես իրեն» (էջ 194): Արդյո՞ք Նարեկա-
ցին «գերազանցապես իրեն» է ներկա-
յացնում, թե՛ իրենով անհատականաց-
ված հավատացյալի հավաքական կեր-
պարը: Գրում է. «... հաճախ հակադր-
վում են մարդն ու աստվածը» (էջ 194):
Բայց այս հակադրությունն ընդդիմու-
թյունն ու բողոք չէ, այլ մեղքերի խոստո-
վանությամբ մաքրագործելու եւ Աստ-
ծուն մերձենալու ձգտում: Եվ այս ամենն
այն դեպքում, երբ Նարեկացին «ներսից
ու դրսից Աստծուն էր հագել»:

*Շարունակելի
Դավիթ ՉԱՄՈՐԱԶՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Սկիզբը՝ էջ 4
Ս. Հովհաննիսյանի Ոսկեբերանը կարծում է, որ այդ աստղը կերպարանափոխված հիշեցումն էր (Религиозно-эпическая Мифология, М., 2007, с. 182): Նույն կարծիքին է Ստեփանոս Սյունեցին՝ նշելով, որ աստղը հիշեցումն էր, որ լուսավորում է մոգերի ճանապարհը և նրանց առաջնորդում Տիրոջ մոտ: «Որպես մեծ աստղը որ գիսաբոր կոչի, յորժամ երեւի նոր իմն նշանակէ, առաւել եւս հրաշափառագոյն աստղ երեւցաւ ի ծնանել Փրկչին, կամ հրեշտակ իսկ երեւալ ի նմանութիւն աստղեղ» (Ստեփանոս Սյունեցի, Մեկնութիւն չորից Աւետարան-ի, 1994, էջ 16): Խնդրող առարկա մոգերին հայտնված լուսատուին արդյոք լույս հրաշք էր, թե՛ բնական լուսավոր մի երեւոյթ, պարբերաբար երեւացող գիսավոր մի մարմին: Այս հարցին փորձել են պատասխանել քրիստոնյա աստղագետները, որոնք իրենց հաշվարկներով հավաստեցին իրական եւ երկնային լուսավոր մի երեւոյթի գոյությունը: Ոմանց կարծիքով՝ Հիսուսի ծննդյան մոտավոր թվականին Լուսնաթագ, Երեւակ մոլորակների մերձեցումը պետք է եղած լինի հենց այն հրաշալի աստղը, որ երեւցել էր մոգերին (Մաղաքիա արք. Օրմանյան, Համապատում, Ս. Էջմիածին, 1997, էջ 49): 1603-1604 թվականներին հայտնի աստղագետ Հովհանն Կեպլերը տեսավ, որ երեք մոլորակները՝ Լուսնաթագ, Երեւակը եւ Հրատը, կանգնում են մի գծի վրա եւ թողնում են մեկ պայծառ աստղի տպավորություն: Նա հաշվարկեց, որ այդ մոլորակները մի գծի վրա են կանգնում

Աուրբենդյան եւ Ակրտուրյան դասերները Էմմիանի եւ Տրադիցիոնի Ավետարաններում

800 տարին մեկ, եւ այն եկեղեցական աւերակ, թե՛ Բեթլեհեմյան աստղը կարող էր լինել այս երեք աստղերի միասնությունը (Толковая Библия, СПб., 1911, с. 42-43): Սակայն Կեպլերի տեսությունն ընդունելի չէ: Պատճառներից մեկն այն է, որ այդ դեպքում Ավետարանում կխուսվեր ոչ թե աստղի, այլ համաստեղության մասին, միջոցառում ավետարանիչը երկնային այդ երեւոյթը հստակորեն աստղ է կոչում, որ քայքայ է շփոթել համաստեղության հետ (Մաղաքիա, Մաղաքիա, Քրիստոնեության իսկությունը, Ս. Էջմիածին, 2011, էջ 260): Ըստ երեւոյթի մանրակարիները «Շնունդ» պատկերելիս առաջնորդվել են այս գաղափարներով: Մատթեոսի Ավետարանն է այն գրական հիմքը (տե՛ս Բ 2, 7, 9-10), որտեղից աստղի պատկերումն անցել է Հիսուսի Շնունդին եւ Մոգերի երկրպագության մանրակարների պատկերագրական համակարգը: Դա Բեթլեհեմյան աստղն է: Եկեղեցուն մեծանուն հայրը՝ ս. Երեմիա Ասորին, իր «Քառավետարանի մեկնության» մեջ Բեթլեհեմյան աստղի մասին գրում է. «Աստղը հայտնվեց, քանի որ դադարեցին մարգարեությունները: Գալիս էր աստղը, որպեսզի

ցույց տար, թե Ո՛ր է Նա, Ում մասին խոսում էին մարգարեները» (Святой Ефрем Сирин, Творения, Т. 8, (изд. «Отчий дом»), 1995, с. 42): Իսկ մարգարեն ասում է. «2օ մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որդի իշխանութիւն իւր եղել ի վերայ ուսոց իւրոց. եւ անուկ կոչեցաւ նմա՝ Հրեշտակ մեծի խորհրդոյ, Աջանչեի, Խորհրդակից, Աստուած Հօգոյ, Իշխան, Հայր Խաղտեղեղ աշխարհին: ... Մեծ է իշխանութիւն նորա, եւ խաղաղութան նորա չիք սահման. յաթոն Դաւիթ նստոցի, եւ զարթայութիւն նորա յաջողեսցէ...» (Եսայի Թ 6-7): Հետեւելով աստղի ընթացքին՝ մոգերը գալիս են Երուսաղէմ եւ հարցնում. «Ո՛ր է որ ծնաւ արքայն իմեցի. զի տեսաք զաստղն նորա յարեւելս, եւ եկաք երկի՛ր պագանել նմա» (Մատթ. Բ 2): Նրանք փնտրում են հրեաների արքային, գտնում Բեթլեհեմում եւ մատուցում իրենց ընծաները՝ ոսկի, կնդրուկ եւ գմուշ (Մատթ. Բ 11): Մոգերի նվիրաբերած ընծաներից ոսկին խորհրդանշում է Մեսիա-Փրկչի արքա լինելը, Նոր արքայական-թագավորական ծառայությունը: Հետեւաբար մեր մանրակարում պատկերված է Բեթլեհեմյան աստղը: Նա

պետք է մոգերին ցույց տար այն ճանապարհ, որ տանում էր դեպի Մեսիա-Փրկչի՝ հրեաների արքան: Սակայն միշտ չէ, որ աստղի առկայությունը մանրակարում խորհրդաբանական է: Այն նաեւ ցույց է տալիս ավետարանական պատմությունների ժամանակագրական ընթացքը: Օրինակ՝ «Տարնընդառաջ»-ի մանրակարներում մատնանշվում է, որ մոգերի այցը մանուկ Հիսուսին տեղի է ունեցել տարնընդառաջից հետո: Դրա վկայությունը Աուրբենդյանի փախուստն է Եգիպտոս, որը տեղի ունեցավ անմիջապես նրանց այցելությունից հետո (տե՛ս Մատթ. Բ 13-14): Արդեն ժամանակ չկար մանուկ Հիսուսին բերելու Երուսաղէմ, քանի որ մոգերը տեղեկացրել էին Հերովդեսին հրեաների թագավորի ծննդյան մասին, եւ նա տեղագրին որոնումների մեջ էր՝ գտնելու եւ սպանելու Փրկչին: Այսպիսով՝ Բեթլեհեմյան աստղի ներկայությունը «Տարնընդառաջ» պատկերում ազդարարում է Հիսուսի՝ Մեսիա-Փրկչի թագավորական ծառայության մասին:

Շարունակելի
Արթուր սրկ. ԱՐԱՐՈՒՅԱՆ

ՄԱՆՈՒԿ-ԿՏՐԻՃՆ ՈՒՇՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սկիզբը՝ թիվ 21-24
Բնակարկված սիրային երգերից տարբերվում են Երեմիա Զյուժուրյանի ստեղծագործությունները: Այս բանաստեղծից մեզ հասել են մի քանի երգեր, որոնցից երկուսը սիրային են («Երգ սիրոյ» եւ «Ի վերայ սիրո եւ ուրախութեան» (տե՛ս Նույն տեղում, էջ 444-445): Զյուժուրյան «Ի վերայ սիրո եւ ուրախութեան»-ի մեջ քիչ է դիմում սիրուհու արտաքինի նկարագրությունը. ավելի ջերմ տողերով խոսում է սիրո վայելքի մասին, իսկ «Երգ սիրո» բանաստեղծության մեջ նա ավելի շատ սիրած կնոջ գեղեցիկ արտաքինն է նկարագրում: Առհասարակ, բանաստեղծը սիրած կնոջը բարձր է դասում բնության բոլոր հրաշալիքներից: Հետեւելով հայրենիների բանաստեղծական սկզբունքներին՝ Զյուժուրյանը սիրած կնոջն է համարում բնության գեղեցկության չափանիշը:

Բուրաստանեացն շուշանք
եկ ի ջուրս, որ վայելանայ,
Գին չեն մազ մի թաթիչիդ
վեր ի վայր, որ տարբերայ:
Շովուկն քաղցրաօղ բացմամբ,
որ երկիրս ճոխութեամբ ցնծայ,
Գին չէ ծով-ծով այտրող,
քո սիրոյդ, որ միշտ քաղցրանայ:
Նույն տեղում, էջ 445

Առանձնահատուկ ուշադրության են արժանի երեմիա Զյուժուրյանի «Ի վերայ ջրոյ» միեւնույն խորագրով երեք բանաստեղծությունները: Դրանք «Տաղ ջրի վրա է ասացեալ» ժողովրդական երգի մշակումներ են: Այդ մասին վկայում է Ասատուր Մնացականյանը. «Շանոթագրվող երգը, դեռեւս 18-րդ դարում, բանաստեղծ Երեմիա Զյուժուրյանի (Երեմիա Չեկեպի) կողմից երաժարվել է մշակման՝ հիմք դառնալով երեք գոգոտրիկ նոր ու թարմ բանաստեղծությունների» (Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 494):

Թե՛ Զյուժուրյանի մշակումներում են թե՛ ժողովրդական տարբերակներում հիմնական գաղափարն այն է, որ ջրին անկանախտելի բարիք է մարդու համար, նա է շունչ ու կենդանություն տալիս աշխարհին, գեղեցկացնում կյանքը: Ժողովրդական տարբերակներում այս գաղափարն արտահայտվում է ջրի եւ մարդու միջեւ իբրեւ երեւու ունեցած երկխոսությունների միջոցով: Զյուժուրյանի բանաստեղծություններից միայն մեկում է պահպանված այս հնարանը: Մյուս երկուսում հեղի-



նակն իր անունից է փառաբանում ջուրը, գովերգում նրա կենսաբար ուժը, սակայն այն տպավորությունն է ստեղծվում, թե երգիչը դիմում է բանական եակի:

Թե՛ գայլը չես խոճար, շատ ցուր թ կիզան,
կեղծ նազեկի վարդոն չի պարտական,
որ եղեր եմ եւ տերտուն սերկերտան,
Դու իսթիգյով քայես մակեման:
Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, էջ 448

Այս եւ նման ուրիշ հատվածներ՝ առանձին վերցրած, սիրո երգն են հիշեցնում, ուր սիրահարը դիմում է «ծիծաղման ծիպացող» ջրին՝ իր նորոտունիկ վարդի պես «ֆիդան» սիրունուհի լուր ստանալու:

Ես քո խապարիդ եմ լաց ՚ի ի ֆիդան,
Դու ծիծաղելով ճեմես ծածանման,
ես կու հարցանեմ գվարդն իմ սիրական,
Դու իսթիգյով ծիխս ծիծաղման:
Նույն տեղում, էջ 448

Ինչպես հայրենիների մեջ, այնպես էլ այստեղ նկատելի են նախաքրիստոնեական «թուխ մանուկ» աստվածության եւ ջրի պաշտամունքի հեռավոր արձագանքները: Համակ Ասիականը հետեւյալ կարծիքն է հայտնում այս առիթով. «Կառուցվածքով ժողովրդականիս պատելի մոտիկ է երրորդ երգը: Հեղինակն այստեղ հանդես է գալիս ժողովրդական երգի «թուխ մանուկ» դերում եւ գրուցում ջրի հետ: Այստեղ եւս

շեշտվում է ջրի կենսաբար ուժը, սակայն Զյուժուրյանը երկխոսության հնարանն օգտագործում է նաեւ կյանքի ու շրջապատի նկատմամբ իր հույզն արտահայտելու համար: Ջուրն այս երգում սուրհանդակ է, որին բանաստեղծն առաքում է հարազատների, սիրելիների, ողջ աշխարհին իր ցնծությունն ու ողջույնը հաղորդելու» (Հ. Սահակյան, Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, էջ 234):

Կարելի է ասել, որ Զյուժուրյանի այս երգերը հայրենիների պես հյուսվել են խրախուսանքի պահերին՝ երիտասարդ, սիրավառ ունկնդիրների վայելքի տրամադրությունները հաղորդելով:

Հագար գեներտար տամ քեզ,
ա՛յ օրինեալ ջուր բարեհամ,
Ուր երթաւ, բարեւ տանին,
ուր գտնուս մեզի սիրական:
Ի մեջ մատուցես յողջեան,
եւ ասես՝ կան ի յողջութեան,
Նստեալ յեգերս իմ խնդան,
սիրելեք մեզիս ՚ի սերյան:
Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, էջ 451

Գինարբույների ժամանակ են հնչել նաեւ 16-րդ դարի բանաստեղծներ Վարդան Կաֆացու եւ Աստվածատուրի երգերը: Կաֆացին «Տաղ վարդի ի Վարդանա» բեղոյալ ասացեալ՝ ողանավորում վարդի գովել է անուն: Ծաղիկների մեջ «գերա-

գոյն» վարդը «ցանկալի է մանկանց», այս սիրահար երիտասարդները՝ «աղուոր մանկտիք», իրենց ձեռքերի «ծակնտուլուն» անտարբեր՝ սիրելիների համար վարդ են քաղում:

Ցնծան մանկտիք, ուրախական քո տեսոյն,
Անեալ միմեան մատուցանես սիրելոյն,
Այլ առաւել սիրով լցեալ աւելուն.
Մի՛ թափիր, վարդ, մի՛ թափիր,
Կիտալ այրեցայ ես քո հոտոյն,
Մի՛ լափիր, վարդ:
Նույն տեղում, էջ 165

Բանաստեղծն ուրախության սեղանի շուրջը հավաքված «եղբայրքին» հորդորում է՝ «ի միասին հրճուիմք ի վերայ վարդոյն»: Նա փառաբանում է այն «քաղցր քունը», որ «վարդ թփեմու ներքեւ» պառկած երիտասարդի սրտին է իջնում:

Եր ժամանակն հասարակ աւուր տօթոյն,
Վարդ թփեմոյդ ներեւ եղբ քաղցր ի քուն,
Վարդ, թափեցար ի վերայ սրտիս բազմագոյն...
Նույն տեղում, էջ 164

Հ. Սահակյանը, վկայակոչելով Ա. Մնացականյանին, եզրակացնում է, թե Կաֆացին իր այս ոտանավորում օգտագործել է միջնադարում հայտնի «Առաստուկ» քառյակի մեջ մտնող գիծը՝ ժողովրդական երգի կրկներգը:

Մի թափիր, վարդ,
Մի՛ թափիր, վարդ,
Ա՛յ, այրեց ես քո դարտեն.
Մի՛ թափիր, վարդ...
Հ. Սահակյան, Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, էջ 319

Ինչույնների ժամանակ հայ կտրիճ-մանկները հաճույքով են ունկնդրել երգիչ Աստվածատուրի՝ այգու, խաղողի եւ գինու մասին բանաստեղծությունները: Երգիչն իր «Տաղ եւ գովասանք...»-ի մեջ պատկերում է այգու ունկնդրն ու ծաղկումը, պտղաբերումը, երբ «ծուլը արձակել մանր ու բար, խաղողն ի կախ թուխ ՚ի սպիտակ», ապա տեսնում ենք «պտուղն ի կառ դեմ արեւուն», իսկ երբ մոտենում է աշունը, այգեգործները հնձաններում հավաքում են խաղողի բերքը, լցնում են ամանները, ապա:

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ էջ 6
Չբեզ խիտեն, այլվի բանան.
Լինիս գինի քաղցրաճաշակ,
Չբեզ տանեն գեղ՝ ի թաղաք.
Մանկտիք խմեն քեզ համարձակ.
Այ՛ լից ու տուր, ա՛յ լից ու տուր
Չանուշ գինին անապական:
Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, էջ 75

Ուշագրավ է, որ նման նկարագրությունների հանդիպում ենք նաեւ ժողովրդական երգերի մշակումներում.

Ողկոյզ հաւողն հասեալ է,
Թուխ եւ սպիտակ կախեալ է,
Կարաս գինով լցեալ է...
Ա. Մաքսակասյան, Հայ միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 178

Վերոհիշյալ խրախճանքի երգերի մասին խոսում է Մ. Աբեղյանը: «17-րդ դարու սկզբի տաղարաններում գտնվում ենք մի քանի ուրախության երգեր, որոնց մեջ գինին եւ խրախճանքն են գովաբանում» (Մ. Աբեղյան, Երկեր, ի. Ղ. եր., 1970, էջ 499), գրում է նա:

Գրականության եւ արվեստի զարգացման, հայ կյանքի բարելավման հետ միասին հայ գաղթաբաններում մշակվում են ծրագրեր Հայաստանի ազատագրության եւ հայկական անկախ պետականության ստեղծման համար: Հատկապես պետք է հիշենք Հրկապատանի Մարգարա քաղաքում Հայաստանի երկրի ազգանվեր գործունեության մասին:

1772 թ. Մարգարաում Հակոբ Շահամիրյանի ջանքերով տպագրվում է Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակի»-ի, որը կոչվում է հորդորակ՝ աշխատությունը, որտեղ հայ բնաշխարհը եւ պատմական անցյալը ճանաչելու հիմքի վրա բարձրացված են համայն հայության միասնականության, նրա քաղաքական արթնացման եւ ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման խնդիրները: «Նոր տետրակի» մեջ արտահայտված գաղափարները համահունչ են միջնադարյան «կտրիճվորաց միությունների» ծրագրերին:

Այսինքն՝ բոլորի գործերում նպատակը մեկն է. կտրիճ երիտասարդների ուսուցանելը «վեներտու եւ անհոգ թուրքությունից», ոգեւորել նախնիների քաջագործու-

ՄԱՆՈՒԿ-ԿՏՐԻՃՆ ՈՒՇՄԻՋՆԱԿԱՐՅԱՆ «ԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ



թյուններով եւ հպարտությամբ, եւ որ ամենակարեւորն է, նախապատրաստել անհուն պատվախնդրությամբ ու սիրով պաշտպան կանգնելու հարազատ երկրին ու ժողովրդին: «Նոր տետրակում» հեղինակը դիմում է կտրիճներին.

Ճաղկափիթը, նորաբողոք
Ո՛վ կտրիճներ, պատրաստ եղեք,
որ մեր Տիրոջ օգնությամբ

ձեզ փրկագործեք
Ու մուտք գործեք գվարձալի եւ
բերկրալի Սարապայան
դրախտը մեր եղեճակերդ,
Զանգի շատերն են վկայում,

որ դրախտը աստվածային
եղել է մեր հայրենիքում,
Որովհետեւ, ինչպես ասվեց դեռ վերելում,
Եփրատը եւ ուրիշ գետեր այստեղից են
ակունք առնում:

Մովսես Բաղրամյան, Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, Եր., 1991, էջ 42

Այս կտրիճներին կոչ է արվում՝ «գնալ հետքով մեր հայրենի, նախնիների», որոնք հանուն ազգի գեղեցիկ եւ վերցնելու եւ վրեժխնդիր եղել իրենց ոսոխներից: Հետաքրքիրն այն է, որ այստեղ «կտրիճն» ու «նահատակը» նույն կերպ են ընկալվում.

Եվ միգուցե այդ տեսնելով՝
պատկառեին իմ որդիներն հուսակտուր,

Գիտակցելի, թե այդ ինչքան անբավարյուն թափվեց, քանիցը հանուն ինձ դարձան խիզախ նահատակներ, հուսափում եմ այստեղ հիշել անունն ուրիշ կտրիճների, որոնց հանգույն հիմա չունեն... Նույն տետրակ, էջ 43

«Նոր տետրակի» այն միտքն է արտահայտվում, որ հայրենիքը պետք է սիրել արյունով, սրտով եւ պատրաստ լինել նրա համար անգամ նահատակվելու. «Երանի թե ազգը մեր մի օր խորհեր նահատակման զոհվել արիաբար...» (Նույն տետրակ, էջ 36):

«Նոր տետրակի» հեղինակը մեծ հայրենասերի ոգով արիության կոչ է անում երիտասարդ կտրիճներին՝ մատնանշելով պատվաբեր այն ուրիշ, որ ավանդված է անձնագրի քաջ նախնիներին.

Միս ինչու քաջամարտիկ եւ անկուն տղամարդիկ
Նախընտրում են միանգամից զոհվել
որպես նահատակներ,
Զան ամեն օր հազար անգամ մահը
տեսնել
թշնամական արհավիրքից, անել վշտից,
Որովհետեւ մտածում են նրանք
այսպես. «Այսօր թե վաղը
բոլորս էլ մեռնելու ենք, ինչպես որ
կարգն է բնական,

Այս, ուրեմն, ավելի լավ է քաջաբար մեկից մեռնել, քան այսպիսի թշվառությամբ մի կերպ ապրել»:

Նույն տետրակ, էջ 36

Այս տողերը բնութագրական են ընդհանրապես հայ քաղաքական մեջ հանդիպող կտրիճ-մանուկ-Փետայ քնարական հերոսին: Բանահյուսությունից եւ քաղաքականության մեջ ավանդված քաջության, անձնագրիության, պատվախնդրության ու նահատակության ոգին անցել է մեր ժողովրդի աշխարհ մեջ եւ պարտավորեցնում է ապրել պատվով ու արյան կանչին հավատարիմ: Այս իմաստով տեղին է հիշատակել «Նոր տետրակը», որը բանասեր Հենրիկ Բախչինյանի կարծիքով՝ «Այդ գիրքը, ըստ էության, հայ ժողովրդին ուղղված գինաված պայքարի կոչ էր ընդդեմ թուրք եւ պարսիկ քանապետության: Մարտասցիները «Նոր տետրակը» տարածում են հայության մեջ, որոշ օրինակներ գինավածների հետ միասին ուղարկվում Պարաբաղի մեկնքներին» (Հենրիկ Բախչինյան, XVII-XVIII դարերի հայ գրականությունը, Եր., 1999, էջ 184):

Ինչպես տեսանք, ուշմիջնադարյան հայ բանաստեղծության մեջ եւս հանդիպում է կտրիճ-մանուկ՝ անձնագրի երիտասարդը, որը ճշմարիտ հայրենասիրության, քաջության, նվիրումի ու սիրու, ինչպես նաեւ սուրբ գործի համար նահատակվողի խորհուրդանշն է:

Նկատեցինք նաեւ, որ հայ գաղթավայրերում ստեղծվում էին «կտրիճվորաց եղբայրություններ», որոնք եղբակալի եւ ուրիշ եղբայրությունների նման ունեին իրենց ծրագիրն ու կանոնադրությունը: Ուրեմն, նկատվում է, որ ժողովրդի դժգոհ ծաղկատարին, Հայաստանից դուրս՝ հեռավոր գաղթավայրերում, շարունակում էր ապրել հայ ոգին, եւ հայ բանաստեղծությունը հնչում էր իբրեւ կարոտի, սիրու ու հայրենասիրության երգ:

Վարդան ԵՐԻՍՏԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՄԱՐԻԱ ԱՆԻԹԵՍՈՐԻ...



Սկիզբը՝ էջ 7
Դուք երբեք տեսե՛ք եթե այն՝ ամբողջովին պատված աստղերով: Ո՛չ: Նայե՛ք իմ գոգնոցին: Գիտե՛ք՝ այն ինչ գույն ունի: Ձեզ չի՞ թվում, որ այն նույն գույնն ունի, ինչ որ երկինքը: Շատ լավ: Նայե՛ք, սա, որ իմ ձեռքում է, նույն գույնի է, ինչ որ իմ գոգնոցն ու երկինքը: Այն կապույտ է: Հիմա մի պահ դիտե՛ք ձեր շուրջը եւ տեսե՛ք՝ կարո՞ղ եք գտնել ինչ-որ առարկա սեպյալում, որը կապույտ կլինի: Դուք գիտե՛ք՝ ինչ գույն ունի բալը, վառվող փայտը եւ այլն»:

Այսքանից հետո երեխայի գիտելության մեջ խառնաշփոթ է: Նա անխմտա ջանքեր է գործադրում՝ պատկերացնելու երկինքը, գոգնոցը, բալը: Նրա համար դժվար է այս խառնաշփոթից առանձնացնել դասի իմասական գաղափարը, միջոցառ 2 գույնով բացատրության դեպքում՝ «սա կապույտ է», իսկ «սա կարմիր է», այդպես է: Այդպիսի աշխատանքից ձեռք գործնականապես հասնում է երեխայի մտքին, որը դեռ ի վիճակի է երկար մտքերի ու բացատրությունների հետեւելու:

Մի անգամ, հիշում եմ, ներկա էի թվաբանության դասին, երբ ե-

րեխաներին սովորեցնում էին, որ 2+3=5: Այդ նպատակի համար ուսուցիչն օգտագործում էր հաշվիչ տախտակ՝ բաղկացած գունավոր ուղղանկյունիքներից: Նա առաջին շարքում դասավորեց 2 ուղղանկյուն, երկրորդ շարքում՝ 3, իսկ երրորդ շարքում՝ 5: Ես դասի զարգացումը լավ չեմ հիշում, բայց ուսուցիչն անհրաժեշտ համարեց հաշվիչ տախտակի ուղղանկյունով 2 շարքերի կողքին ամրացնել ստվարաթղթե տիկնիկներ՝ կապույտ տիկնիկին անվանելով Մարիետա, իսկ մյուսին, որը պարունկ էր, Ֆիջին: Չգիտեմ՝ ինչպես էր ուսուցիչը հանգել նման որոշման, բայց նա երկար խոսեց տիկնիկների հետ՝ շարժելով նրանց: Ես իման պարունկներին ավելի լավ եմ հիշում, քան թվաբանական գործընթացը, իսկ երեխաներն ինչպե՞ս դա ընդունեցին, արդյո՞ք այդ ձեռով նրանք հասկացան, որ 2+3=5: Նրանք պետք է մտավոր ահեղի ուժ գործադրեին, իսկ ուսուցիչը երկար ժամանակ վատնեց՝ անխմտա խոսելով տիկնիկների հետ:

Շարունակելի
Սկզբներից թարգմանությունը՝
Լիլիթ ՀԱՎԻՐՅԱՆ

ԵՂԵՈՒՆ ԱՐՁԱԳԱՆԲԸ...

Սկիզբը՝ էջ 7
Մենք ամենքս մեկ նպատակ պետք է հետապնդենք. քանդված երկիրը վերանորոգել՝ (մեջբերում միջնորդավորված է՝ Վազգեն Գաբրիելյան, Տրամության եւ խաղաղության երգեր, Արեւմտահայ բանաստեղծները, Եր., 1974, էջ 158):

Գրականագետ Ա. Ավագյանի՝ հայոց եղեռնապատումի պոետիկային տված հետեւյալ բնութագիրը կարող է վերաբերել նաեւ Օշականի ստեղծագործությանը. «Եղեռնապատումի գրականության ուշագրավ առանձնահատկությունն այն է, որ... ցույց տալով, թե ինչ բան է եղեռնը, պատկերեց ոչ թե սպանողի ու ջարդարի արյան հեղուկները, այլ դրանց հարուցած հոգեկան վերապրումները: Ավելին, այդ գրականությանը դրոշմ գրականությունն է ոչ ոչ է ողի, այլ մի գրականություն, որը հաստատվում է կյանքը, ապրելու իրավունքն ու արարումը» (Արթուր Ավագյան, Տառապանքի մորմոք եւ հերոսացման կանխ, Հայոց եղեռնապատումի պոետիկա, Եր., 2015, էջ 11):

Իր ժողովրդի կորուստներն ու անկումները ողբալուց հետո, նրա կենսամիտության ոգին բարձրացնելու նպատակով, Օշականը նոր կյանքի կոչ է անում. «Այսքան հույսով եւ անսահման ուզեցե՛ք ետը... ես կը կանգնեմ կենսից, նոր օրերու նոր մարդերուն ականջին» (Հայրենի հեղիաթներն): խորհրդակի» վերնագրված խորհրդանշական երկը հայոց ազգային անկախ պետականության շուրջ համախմբվելու պատ-

գամախոսություն է: Այն ցույց է տալիս երազանքների իրականացման ուղին, գալիք Հայաստանը, որը պիտի ստեղծվեր պայքարով ու մաքառումով: Եվ Օշականի՝ «Կայսերական յաղթերգութիւն» շարքում առկա արյան վրեժի տրամադրությունները «Հիմեն ու լորեն» շարքում է «հեղիաթներում» վերածվում են ապրելու եւ հարատեւելու կոչի: Իրենց արգանքի պտուղները Եփրատի ափերին հանձնած հարսների փոխարեն նոր հարսները պիտի ծնեն Հայսի եւ Երազի իրականացման համար պայքարող գինավորներ՝ գրահավորված, պատրաստ սրբազան պայքարի: Նոր կրթական խորհրդանշում է նորօրյա Հայաստանը, նրա նոր սերունդը, երակներում՝ ազգի պատմությունը: Օշականի սպասումներն ու ցանկություններն ամփոփվում են հետեւյալ տողերում. «Ձեր երկիրը կը սպասե՛ ձեզե՛ք սերունդը, որ փառքի լուսապատկերն տակ խնդրող, հալեցնել մեր պատմության ամենէն ահաւոր արատը» (Տակոբ Օշական, Կայսերական յաղթերգութիւն, Պէրյուք, 1983, էջ 90): Եվ Չառիկը, որ Հայրության տունն է, դառնալու է ողջ հայության հոգեւոր վերածննդի խորհրդանշանը: Ուրեմն Օշականն ուզում էր կերտել ցեղի չմեռնող ոգին, տեսնել այդ ոգու հաղթանակը, որը, ըստ նրա, իր ազգի գոյության միակ գրավականն է: Այդ ոգին անխափշտակ կապված է իր բնաշխարհի, իր լեռների հետ, ու Օշականի՝ տարբեր պատմվածքներում հիշատակված սրբազան բարձունքը,

որը եկեղեցույալ Մասիսի, դառնում է այդ անմահ ոգու խորհրդանշանը:

Օշականի փոքր արձակի այս էջերը վկայություններ են, մեծ գրողի եւ նրա բախտակիցների կյանքի պատկերը, այդ ժամանակաշրջանի հայելին, նրա «կարմիր լուրերը» պատմված «վաերական վկաներու բերանով» (Յ. Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականության, Ամթիւ, Խաթա, 1982, էջ 122): «Կայսերական յաղթերգութիւն»-ով Օշականը դարձավ հայոց եղեռնապատումի գրականության սկզբնավորողներից մեկը, հայոց «վրեժի սերմնացանը» (Ռ. Սեւակ):

Մարիան ՀԱՎԱՐՅԱՆ

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Երիտասարդ Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624
Հրատարակության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ eristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 16.1.2017թ.

Տպագրանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ